

23

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

2019

Lsys



Lnyu



ԾԱՌ

ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ՈՒՂՂԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
(2018-2019թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ)

ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված ՀՀ կառավարության գործունեության ուսումնասիրություն

(2018-2019թթ. Ժամանակահատված)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	1
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ	3
ՀՀ կառավարության ծրագիր	3
«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր	3
ՄԱՍ 1. ՓՄՁ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ	5
Հարկային բարենպաստ պայմանների ստեղծում	5
Կանխատեսելի հարկային միջավայր	10
Պետություն-մասնավոր հատված երկխոսություն	14
Ամփոփում	15
ՄԱՍ 2. ՓՄՁ-ՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ	18
ՓՄՁ-ների զարգացման պետական քաղաքականության իրավական հենքը	18
ՓՄՁ-ների աջակցության ինստիտուցիոնալ կառույցները և ծրագրերը	21
Ամփոփում	31
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	33
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	35
Հավելված 1. ՓՄՁ ԶԱԿ-Ի 2017, 2018 և 2019թթ. միջոցառումների ծրագրերով նախատեսված գործողությունների համեմատական աղյուսակ	35
Հավելված 2. ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալի 01.11.2019թ. թիվ 07/10693-2019 գրություն	40

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱՓԲԸ	Ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՆԱԿ	«Ներդրումների աջակցության կենտրոն» հիմնադրամ
ՈՒՎԿ	Ունիվերսալ վարկային կազմակերպություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՓՄՁ ԶԱԿ	«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի գարնանը Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունը ստեղծեց երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նոր հնարավորություններ և սպասումներ, որոնց իրագործման ուղղությամբ պատկերացումներն իրենց տեղը գտան 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններում ՀՀ քաղաքացիների մեծամասնության աջակցությունը ստացած «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում:

Երկրի զարգացման առաջնահերթություններն ու կոնկրետ գործողությունները որոշակիորեն արտացոլված են նաև Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 65-Ա¹ և ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության 2019–2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650-Լ² որոշումներում:

Նշված ծրագրերում անդրադարձ կա նաև փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման կարևորությանը, այդ ուղղությամբ նախատեսվող հիմնական քայլերին և կոնկրետ միջոցառումներին:

Հաշվի առնելով նաև «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում պետական համակարգի թափանցիկ և հաշվետու կառավարման վերաբերյալ շեշտադրումները՝ սույն հետազոտությամբ փորձ է արվել գնահատելու ինչպես նշված ծրագրի, այնպես էլ ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության գործունեության ծրագրով տրված խոստումների իրագործման, ներկայացված խնդիրների լուծման և միջոցառումների իրականացման ընթացքը՝ առավել արդյունավետ հանրային վերահսկողություն ապահովելու նպատակով:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես պաշտոնական աղբյուրների տվյալները, այնպես էլ գործարար համայնքից և բիզնեսի շահերը ներկայացնող հասարակական կազմակերպություններից ստացված գործնական տեղեկությունները:

¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128281>

² <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131287>

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՃԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

ՀՀ կառավարության ծրագիր

Փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) զարգացմանն առնչվող խոստումներն իրենց տեղն են գտել ՀՀ կառավարության ծրագրի 5-րդ բաժնի 5.8-րդ կետում (Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը՝ ներառական տնտեսական աճի նախադրյալ), հետևյալ ձևակերպմամբ.

- Կառավարությունը քայլեր է ձեռնարկելու ՓՄՁ-ների ոլորտում առկա խոչընդոտների վերացման ուղղությամբ: Դրանք իրականացվելու են ձեռնարկատիրական մշակույթի զարգացման, նպաստավոր օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի կայացման, ՓՄՁ-ների կարողությունների զարգացման ճանապարհով,
- **Կաջակցվեն «զրոյից» բիզնես ստեղծելու ձգտում ունեցող քաղաքացիների հմտությունների զարգացումը և նրանց ծրագրերի իրագործումը՝** գործնական միջանցք ապահովելով նոր գործարար նախաձեռնությունների իրականացման համար: Այդ նպատակով կառավարությունը կհամագործակցի ՓՄՁ-ների շահերը ներկայացնող հասարակական կառույցների հետ, մասնավորապես՝ **տարածքային ձեռներեցության կենտրոններ ձևավորելու** և զարգացնելու միջոցով,
- ՓՄՁ-ների զարգացման համար կարևոր որոշում է միկրոբիզնեսի հարկազատումը: **Մինչև 24 մլն դրամ իրացման շրջանառությամբ միկրոձեռնարկություններն ազատված կլինեն շրջանառության և եկամտային հարկերից**, որը բացի սոցիալական կարևոր նշանակությունից, կստանա գործարար փոքր գաղափարները ձեռնարկատիրական մեծ ծրագրերի «տրանսֆորմացիայի» էական նշանակություն: Կառավարությունը կարևորելու է նաև ՓՄՁ-ների խոշորացման այլ խթանների համակարգի զարգացումը: Մեծ նշանակություն է տրվելու նաև **ՓՄՁ-ների սուբյեկտների համար ֆինանսների հասանելիության բարձրացման ուղղությամբ ծրագրերի իրականացմանը:**

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

Իշխող քաղաքական ուժի նախընտրական ծրագրում առկա են մի շարք դրույթներ, որոնք նախատեսում են ՓՄՁ-ների վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունեցող միջոցառումներ: Այսպես, ծրագրի 6-րդ՝ «Տնտեսական բարեփոխումներ

առաջնահերթությունները» բաժնում³ որպես ուղղակի ազդեցություն ունեցող ուղղություն կարելի է առանձնացնել «ՓՄՁ և տարածքային համաչափ զարգացումը», իսկ որպես գործողություններ՝

- ՓՄՁ ոլորտում առկա խոչընդոտների գույքագրմամբ, գործարար և մասնագիտական համայնքի հետ ակտիվ երկխոսությամբ ՓՄՁ ոլորտում գործունեություն ծավալելու գրավիչ պայմանների ստեղծումը, մասնավորապես՝ տարեկան **մինչև 20 միլիոն դրամ շրջանառություն ունեցող բիզնեսը հարկերից ազատելով**՝ նոր փոքր և միջին բիզնեսի ստեղծման խրախուսումը,
- ՓՄՁ զարգացմանը նպաստելը և այնպիսի հնարավորությունների ընձեռումը, որպեսզի փոքր ձեռնարկությունը ձգտի և միաժամանակ կարողանա դառնալ միջին, իսկ միջինը՝ մեծ: Այդ նպատակին հասնելու համար ստեղծվելու են ոչ միայն հարկային գրավիչ պայմաններ, այլև գործարար և մասնագիտական համայնքի հետ ակտիվ երկխոսությամբ **մշակվելու է ՓՄՁ և ձեռներեցության զարգացմանն ուղղված միջոցառումների փաթեթ**,
- հարկային քաղաքականությամբ գործարարի և ներդրողի համար արդար, ընկալելի և կանխատեսելի միջավայրի ստեղծում, ինչպես նաև հարկային օրենսգրքի բարելավմամբ ընկալելի և կանխատեսելի հարկային կանոնների սահմանում, որոնք ներդրումային ծրագրերի, ծախսերի և եկամուտների տնօրինման գործընթացներում նպաստելու են արդյունավետ որոշումների կայացմանը:

³ «Իմ քայլը» դաշինքի 2019թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների նախընտրական ծրագիր, էջ 24, 25: <https://civilcontract.am/imqayl>

ՄԱՍ 1. ՓՄՁ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՀՀ կառավարության ծրագիր

Թիրախ 1. Կառավարությունը քայլեր է ձեռնարկելու ՓՄՁ-ների ոլորտում առկա խոչընդոտների վերացման ուղղությամբ: Դրանք իրականացվելու են ձեռնարկատիրական մշակույթի զարգացման, նպաստավոր օրենսդրական դաշտի կայացման ... ճանապարհով:

Թիրախ 2. Մինչև 24 մլն դրամ իրացման շրջանառությամբ միկրոձեռնարկություններն ազատված կլինեն շրջանառության և եկամտային հարկերից:

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

Թիրախ 1. ՓՄՁ ոլորտում գործունեություն ծավալելու գրավիչ պայմանների ստեղծումը, մասնավորապես՝ տարեկան մինչև 20 միլիոն դրամ շրջանառություն ունեցող բիզնեսը հարկերից ազատելով՝ նոր փոքր և միջին բիզնեսի ստեղծման խրախուսումը:

Թիրախ 2. գործարար և մասնագիտական համայնքի հետ ակտիվ երկխոսությամբ մշակվելու է ՓՄՁ և ձեռներեցության զարգացմանն ուղղված միջոցառումների փաթեթ:

Թիրախ 3. Հարկային քաղաքականությամբ գործարարի և ներդրողի համար արդար, ընկալելի և կանխատեսելի միջավայրի ստեղծում, ինչպես նաև հարկային օրենսգրքի բարելավմամբ ընկալելի և կանխատեսելի հարկային կանոնների սահմանում:

Հարկային բարենպաստ պայմանների ստեղծում

Ինչպես տեսնում ենք, «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրի և ՀՀ կառավարության ծրագրի՝ ՓՄՁ-ների զարգացմանը նվիրված հատվածները բովանդակային առումով հիմնականում կրկնում են միմյանց: Դրանք ՓՄՁ-ների համար մշտապես կարևոր թեմաներն են՝ պարզ վարչարարությունը, հարկային օրենսդրության դյուրինությունը, բիզնեսի վարման հմտությունները և այլն:

Անդրադառնալով արդեն իսկ իրականացված քայլերին՝ պետք է առանձնացնել շրջանառության հարկ վճարող համարվելու՝ տարեկան հասույթի մեծությամբ

պայմանավորված շեմը 58.35 միլիոնից 115 մլն բարձրացնելը և միկրոձեռնարկատիրության հարկային ռեժիմի սահմանումը⁴:

Շեմի բարձրացումը ՓՄՁ-ներին թույլ կտա հայտարարագրել թաքցվող շրջանառությունները, ինչը հաճախ պատճառ է հարկման ընդհանուր դաշտի պահանջներից բխող վարչարարության:

Միկրոձեռնարկատիրության հարկային ռեժիմը, որն ուժի մեջ է մտնում 2020թ. հունվարի 1-ից, հնարավորություն կտա տարեկան մինչև 24 մլն դրամ շրջանառություն ունեցող տնտեսավարողներին ազատվելու պետական հարկերից (բացառությամբ գործունեության որոշ տեսակների):

Միկրոձեռնարկատիրությունում ներգրավված վարձու աշխատողների եկամտային հարկի պարտավորությունը սահմանվել է ամսական 5000 դրամ և աշխատողների թվաքանակի սահմանափակում չկա: Ըստ էության՝ այս հարկային ռեժիմը ներկայումս գործող ընտանեկան ձեռնարկատիրության կատարելագործված, առավել ազատական մոդելն է և հաշվի է առնում վերջինիս հիմնական թերությունը՝ միայն ընտանիքի անդամներով սահմանափակված լինելը:

Միաժամանակ, ավելացվել է թույլատրելի շրջանառության ծավալը՝ գործող 18 մլն դրամը դարձնելով 24 մլն և վերացվել են առևտրական գործունեությամբ (միայն մարզերում) և ենթակցիզային ապրանքների արտադրությամբ զբաղվելու սահմանափակումները: Չնայած շրջանառության շեմի սահմանափակման առկայության պարագայում Երևանում առևտրային գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը կարող է տրամաբանական չթվալ, այնուամենայնիվ, այն գուցե և արդարացված է՝ մարզերում բիզնեսի վարման առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու տեսանկյունից: Ենթակցիզային ապրանքների արտադրության սահմանափակման վերացումը կարող է նպաստել հատկապես փոքր գինեգործության, գարեջրի, մրգային օղիների արտադրության զարգացմանը: Ներկայումս, հատկապես Վայոց ձորի մարզում զարգացած է տնայնագործական գինու արտադրությունը, որն ունի նաև էական զբոսաշրջային գրավչություն, սակայն ոլորտն ամբողջությամբ գործում է սովետային դաշտում, քանի որ առկա կարգավորումները չեն նախատեսում հարկման պարզեցված համակարգերում գործելու և զարգանալու հնարավորություն: Ոլորտի զարգացմանը կարող է նպաստել նաև ենթակցիզային ապրանք

⁴ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-68-Ն օրենքը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=131962>

արտադրողներին շրջանառության հարկի ռեժիմում գործելու հնարավորության ընձեռումը, որը ևս ուժի մեջ կմտնի 2020 թվականի հունվարի 1-ից⁵:

Գերփոքր և սկսնակ բիզնեսի գործունեության համար նոր հարկային ռեժիմը միանշանակ ստեղծում է առավել բարենպաստ պայմաններ և ամբողջությամբ համապատասխանում է թե՛ «Իմ քայլը» դաշինքի, թե՛ ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված խոստումներին:

Ինչ վերաբերում է ՓՄՁ-ների համար նպաստավոր օրենսդրական դաշտի, հարկային քաղաքականությամբ գործարարի և ներդրողի համար արդար, ընկալելի և կանխատեսելի միջավայրի ստեղծմանը՝ ***մինչ այս պահը վարվող քաղաքականությունն առայժմ միանշանակ չէ:***

2019 թվականի հունիսին ընդունված հարկային օրենսգրքի փոփոխությունների փաթեթը հիմնականում մշակվել էր նախորդ կառավարության կողմից, սակայն դրանում իրականացվեցին էական փոփոխություններ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծի շուրջ պատշաճ հանրային քննարկում չէր իրականացվել, բիզնեսի համար ոչ բարենպաստ մի շարք դրույթներ փոխվեցին միայն շահագրգիռ խմբերի կողմից բողոքի ձայն բարձրացվելուց հետո՝ ***ՀՀ վարչապետի միջամտությամբ:*** Որպես օրինակ՝ կարելի է նշել հանրային սննդի ոլորտում շրջանառության հարկի դրույքաչափի՝ հաջորդող 2 տարիների ընթացքում նախատեսվող բարձրացումները, ինչը կանխելու նպատակով ոլորտի գործարարները ստեղծեցին «Ռեստորանների հայկական միությունը» և իրականացրին մի շարք բողոքի գործողություններ: Այդ գործողություններին նախորդել էին բազմաթիվ հանդիպումներ պատասխանատու գերատեսչությունների և ՀՀ վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչների հետ:

Մյուս կարևոր օրինակը հաշվապահական, խորհրդատվական ընկերությունների համար շրջանառության հարկով աշխատելու արգելքի սահմանումն էր, որը ևս չեղարկվեց միայն ոլորտի տնտեսավարողների բողոքի արդյունքում: Ստացվում է այնպես, որ պետական մարմիններն ականջալուր չեն բիզնեսի ձայնին, քանի դեռ այն չի վերաձվել բողոքի գործողությունների, կամ չկա ՀՀ վարչապետի միջամտությունը:

⁵ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի հունիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-68-Ն օրենք, 40-րդ հոդվածի 3-րդ կետ և 47-րդ հոդված:

Չնայած ՓՄՁ-ները հիմնականում օգտվում են հարկման հատուկ (պարզեցված) համակարգերից, առկա են նաև հարկման ընդհանուր համակարգում գործունեություն իրականացնողներ: Թվում է, թե վերջիններիս համար իրականացված կարևոր փոփոխություն կարելի է համարել 2020 թվականի հունվարի 1-ից շահութահարկի դրույքաչափի իջեցումը 20%-ից 18%, իսկ միջինից բարձր աշխատավարձ վճարողների համար՝ նաև եկամտային հարկի դրույքաչափերի համահարթեցումն ու աստիճանական իջեցումը: 2020թ. հունվարի 1-ից եկամտային հարկի դրույքաչափը կկազմի 23% և տարեկան 1%-ային կետով իջնելով 2023թ. կհասնի մինչև 20%-ի: Չնայած այս հարկատեսակը բիզնեսի հարկ չէ, այնուամենայնիվ Հայաստանում ընդունված գործատու-աշխատող հարաբերությունների բնույթի պայմաններում եկամտային հարկի բեռը կրում է գործատուն:

Տվյալ հարկատեսակի գծով բեռի իջեցման հետևանքը ՓՄՁ-ների վրա գնահատելու համար դիտարկենք Աղյուսակ 1-ում բերված վիճակագրական տվյալները:

Աղյուսակ 1. Միջին ամսական անվանական աշխատավարձը՝ ըստ տնտեսավարողների չափերի, 2017թ.⁶

Ընդամենը	ՓՄՁ ընդամենը	Գերփոքր	Փոքր	Միջին	Խոշոր
186 486	155 078	101 593	135 982	175 397	238 963

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, 2018

Ակնհայտ է, որ գերփոքր և փոքր տնտեսավարողների համար 2020 թվականին որևէ փոփոխություն չի լինելու, քանի որ վերջիններիս աշխատողների եկամուտները այժմ էլ հարկվում են 23%-ով (մինչև 150.000 դրամ եկամտի դեպքում), իսկ հաջորդող տարիներին նախատեսվող իջեցումից ևս որևէ էական ֆինանսական բարելավում չի սպասվում: Որոշակի տնտեսում կարող են ունենալ աշխատողների առավել մեծ թիվ ունեցող միջին ընկերությունները, սակայն նրանց կշիռը ՓՄՁ-ների մեջ շատ փոքր է: Համեմատության համար նշենք, որ 2017 թվականի տվյալներով՝ 59.467 ՓՄՁ-ներից միայն 515-ն է միջին, որոնք ունեն 49.927 վարձու աշխատող, այսինքն՝ միջին հաշվով 97 աշխատող⁷:

⁶ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում, 2018, էջ 15: https://www.armstat.am/file/article/sme_bul_arm.pdf

⁷ https://www.armstat.am/file/article/sme_bul_arm.pdf

Ստացվում է, որ շահութահարկի և եկամտային հարկի դրույքաչափերի իջեցումը նպաստելու է խոշոր ընկերություններին, քանի որ գործող պրոգրեսիվ դրույքաչափի պարագայում 150.000-ից 2.000.000 դրամ աշխատավարձը հարկվում է 28%-ով: Սպասվող խնայողությունն արտաքին շուկաներում մրցակցության տեսանկյունից, իհարկե, դրական է, սակայն տեղական շուկայում ՓՄՁ-ների և խոշորների միջև մրցակցության տեսանկյունից ավելացնում է վերջիններիս առավելությունը:

Այս համատեքստում հարկ է նշել նաև նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ կապված խնդիրը, որը սոցիալական տեսանկյունից թվում է արդարացված, սակայն **ՓՄՁ-ների համար պարունակում է ռիսկեր**: Տնտեսավարողների, ինչպես նաև բիզնեսի շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկումներից պարզ է դառնում, որ ներկայումս բազմաթիվ տնտեսավարողներ, փաստացի ունենալով վարձու աշխատողներ, նրանց չեն գրանցում: Պատճառը միայն հարկի գումարի չափով տնտեսելը չէ: Իրականում գերփոքր և փոքր տնտեսավարողները հաճախ վճարում են նվազագույն աշխատավարձից ավելի ցածր աշխատավարձ՝ ցածր շահութաբերության պատճառով: Խնդիրն առավել սուր է մարզերում, որտեղ աշխատավարձերն ավելի ցածր են: Այս պայմաններում աշխատողին օրինական դաշտ բերելը շատ տնտեսավարողների համար դառնում է անհնարին:

Կարծում ենք, խնդիրն ավելի է սրվելու ՀՀ կառավարության ս.թ. հունիսի 27-ին ընդունած որոշման արդյունքում, որով հավանություն տրված և ՀՀ Ազգային ժողովի կողմից 2019 թվականի նոյեմբերի 19-ին երկրորդ ընթերցմամբ ընդունված «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծին, որով նվազագույն աշխատավարձը 55.000 ՀՀ դրամից բարձրացվում է մինչև 68.000 ՀՀ դրամ:

Նկար 1. Հարված ՀՀ Ազգային ժողովի կայքից՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման վերաբերյալ

2. Քննարկված հարցը՝

ՀՀ օրենքի նախագիծը ««Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»
[N-286-16.09.2019-ՊԻ-011/0](#)
 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

Բախարկության արդյունքները՝ կողմ՝ 103, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1 | [Անհատական օվեթարկություններ](#)
 Օրենքի նախագիծն ընդունվել է առաջին ընթերցմամբ

3. Քննարկված հարցը՝

ՀՀ օրենքների նախագիծերը 1. ա) «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին
[\(Պ-148-22.05.2019.27.09.2019-ԱԱ-011/1 Հեղինակներ՝ Վարազդատ Կարապետյան, Բարկեն Թունյան, Նարեկ Զեյնալյան\)](#)

բ) «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին
[\(Պ-148-22.05.2019-ԱԱ-011/1 Հեղինակներ՝ Վարազդատ Կարապետյան, Բարկեն Թունյան, Նարեկ Զեյնալյան\)](#)

Բախարկության արդյունքները՝ կողմ՝ 104, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 | [Անհատական օվեթարկություններ](#)
 Օրենքներն ընդունվել են երկրորդ ընթերցմամբ և ամրագրվում

4. Քննարկված հարցը՝

ՀՀ օրենքների նախագիծերը 1. ա) Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

Թվում է, թե գերփոքր բիզնեսի մի մասը կարող է խուսափել ավելացվող ֆինանսական բեռից՝ 2020 թվականից տեղափոխվելով միկրոձեռնարկատիրության ռեժիմ և վճարելով եկամտային հարկի հաստատուն 5000 դրամ գումարը: Այդպիսով տնտեսավարողը կվճարի ավելի փոքր եկամտային հարկ, սակայն չի ազատվի նվազագույն աշխատավարձի՝ օրենքով սահմանված գումարը վճարելուց, որն ավելի մեծ է, քան ներկայումս է վճարվում: Ստացվում է, որ ՓՄՁ-ների ամենախոցելի խումբը վարձու աշխատող ունենալու դեպքում հայտնվելու է ավելի ծանր վիճակում:

Ամփոփում. Միկրոձեռնարկատիրության հարկային ռեժիմը, ԱԱՀ-ի շեմի բարձրացումը և հարկման հատուկ համակարգերում ենթաակցիզային ապրանքների արտադրության սահմանափակման վերացումը 2020 թվականից կբարելավեն ՓՄՁ-ների գործունեության պայմանները: Միաժամանակ, եկամտային հարկի իջեցումից ՓՄՁ-ները չեն օգտվելու, իսկ խոշորների հետ մրցակցելիս՝ հայտնվելու են ավելի վատ պայմաններում:

Նվազագույն աշխատավարձի բարձրացումը գերփոքր և փոքր բիզնեսի վրա ունենալու է բացասական ազդեցություն՝ հատկապես մարզերում:

Կանխատեսելի հարկային միջավայր

Հարկային միջավայրի հստակ տեսլականի բացակայության պարագայում որպես տնտեսավարման պայմանների կայունության և կանխատեսելիության որոշակի հիմք կարող էր լինել ՀՀ կառավարության 2019-2023 թվականների

գործունեության միջոցառումների ծրագրի⁸ 327-րդ կետով («Հարկային օրենսդրության բարեփոխում») նախատեսված փաստաթղթի առկայությունը: Նշված կետը ենթադրում է «Հարկային համակարգի հետագա փոփոխությունների ուղղությունները և սկզբունքները նախանշող ռազմավարական փաստաթղթի առկայություն, որը ուղենիշ կհանդիսանա հարկային համակարգի հետագա փոփոխություններն իրականացնելու առումով»: Հարկային բարեփոխումների ռազմավարական փաստաթուղթը պետք է ներկայացվեր ՀՀ վարչապետի աշխատակազմ 2019թ. օգոստոսին, սակայն սեպտեմբերի վերջի դրությամբ այն ներկայացված էր հանրային քննարկման՝ e-draft.am կայքում⁹: Փաստաթուղթը կառավարության վերջնական դիրքորոշումը չի արտահայտում և ներկայացնում է միայն ՀՀ ֆինանսների նախարարության տեսլականը հարկային համակարգի հետագա փոփոխությունների վերաբերյալ:

Ռազմավարության կարևոր կետերից կարելի է առանձնացնել հետևյալները.

- «Հարկման հիմնական և այլընտրանքային համակարգերի համար համադրելի հարկային բեռի սահմանում» բաժնում նշվում է, որ շրջանառության հարկի պարագայում գործունեության այս կամ այն տեսակի համար վճարվող շրջանառության հարկի դրույքաչափը շուրջ 2-3 անգամ ավելի ցածր է, քան նույն գործունեության տեսակի համար հարկման ընդհանուր համակարգում վճարվող ԱԱՀ-ի և շահութահարկի արդյունավետ դրույքաչափերի հանրագումարը: Որպես լուծում՝ առաջարկվում է շրջանառության հարկի համակարգում հարկման ընդհանուր համակարգի համեմատությամբ փոքր-ինչ ավելի բարձր բեռի սահմանումը, քանի որ շրջանառության հարկ վճարողներն անհամեմատ ավելի քիչ ռեսուրս են ծախսում հարկային հաշվառման և հարկային օրենսդրությամբ սահմանված պահանջների ապահովման համար:

Տեսականորեն հնարավոր է, որ դրանք ճիշտ լինեն, սակայն ռազմավարությունում արված պնդումների և գնահատականների վերաբերյալ հաշվարկներ ներկայացված չեն, ինչը կարելի է համարել ոչ ճիշտ մոտեցում: Խնդիրն այն է, որ համեմատությունն իրականացվում է միավոր շրջանառության համար և հաշվի չի առնում մասշտաբի էֆեկտից (այդ թվում՝ նախկինում ձևավորված անհավասար մրցակցության հետևանքով) մարդկային ռեսուրսների, տեխնոլոգիաների, ունակությունների, գիտելիքների պակասի, ֆինանսների հասանելիության և

⁸ ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի «ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 650-Լ որոշում (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131287>):

⁹ Ընդ որում, հետագայում այն ամբողջությամբ հեռացվել է e-draft կայքից և բացակայում է նաև ՀՀ ֆինանսների նախարարության կայքից:

բազմաթիվ այլ ուղղություններով ՓՄՁ-ների և խոշոր ընկերությունների տարբերությունները: Առկա պայմաններում շրջանառության հարկի դրույքաչափի բարձրացումն ավելի կմեծացնի խոշոր և փոքր ընկերությունների մրցակցային հնարավորությունների ճեղքվածքը: Ինչ վերաբերում է ոչ բարեխիղճ հարկ վճարողների կողմից շրջանառությունը թաքցնելու արդյունքում հարկման ընդհանուր դաշտ չանցնելու իրողությանը, կարծում ենք, այն առավելապես հարկային վարչարարության խնդիր է:

- միկրոձեռնարկատիրության կամ շրջանառության հարկի համակարգում գործող հարկ վճարողների կողմից դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի հիման վրա հարկման ընդհանուր համակարգում գործող տնտեսավարող սուբյեկտները շահութահարկով հարկման բազան նվազեցնելու հնարավորություն ունեն: Հարկման համակարգերի միջև արհեստական գործարքների իրականացմամբ հարկումից խուսափելու մեծ ու դժվար կառավարելի ռիսկեր են ստեղծվում, քանի որ հաշվարկային փաստաթուղթ դուրս գրողը, միևնույն է, դրա արդյունքում լրացուցիչ հարկային պարտավորություն չի կրում կամ կրում է փոքր հարկային պարտավորություն, բայց փոխարենը հաշվարկային փաստաթուղթ ստացողն էականորեն կրճատում է իր հարկային պարտավորությունները: Որպես լուծում՝ առաջարկվում է սահմանափակել հարկման այլընտրանքային համակարգերում գործող տնտեսավարող սուբյեկտների կողմից դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի հիման վրա հարկման ընդհանուր համակարգում գործող տնտեսավարող սուբյեկտների կողմից ծախսագրումներ կատարելու (շահութահարկով հարկման բազան նվազեցնելու) հնարավորությունը:

Նման լուծումը կնշանակի ավելի սրել հարկման ընդհանուր և հատուկ համակարգերում գործող տնտեսավարողների համագործակցության առկա խնդիրները: Ներկայումս բազմաթիվ փոքր արտադրողներ չեն կարողանում վաճառել իրենց արտադրանքը, քանի որ մանրածախ առևտուրը հիմնականում կենտրոնացած է հարկման ընդհանուր համակարգում գործող առևտրի օբյեկտներում, որոնք շահագրգռված չեն ԱԱՀ վճարող չհամարվողից մատակարարումներ ունենալու հարցում: Ստացվում է, որ պետությունը, գիտակցելով վարչարարական բեռի ծանրությունը, ՓՄՁ-ների համար ստեղծում է պարզեցված հարկային ռեժիմներ, սակայն դրանց աճի հնարավորությունները մնում են սահմանափակ՝ այդ թվում հարկային օրենսդրության անկատարության պատճառով:

Կարծում ենք՝ նման սահմանափակումը չի համապատասխանում ՀՀ կառավարության ծրագրի և «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրի՝ վերը նշված այն դրույթին, համաձայն որի **«պետք է ընձեռվեն հնարավորություններ, որպեսզի փոքր ձեռնարկությունը ձգարի և միաժամանակ կարողանա դառնալ միջին...»**։ Առանց հարկման տարբեր համակարգերի միջև համագործակցության հնարավորության, փոքր ընկերությունները չեն կարողանա ինտեգրվել առավել խոշորների արժեշղթայում և կսահմանափակվեն միայն միմյանց միջև տնտեսական հարաբերություններով, որը զարգացման իրական հնարավորություններ չի ստեղծի։

Տվյալ խնդրին անդրադարձել է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը՝ հանրային քննարկման ներկայացված ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարության գործողությունների ծրագրում¹⁰։ Ծրագրի 3.7-րդ՝ «Նպաստել ՓՄՁ-ների ինտեգրմանը խոշոր ձեռնարկությունների արժեշղթայում» բաժնում նախատեսվում է «Հարկային քաղաքականության միջոցով կարգավորել ԱԱՀ դաշտում աշխատող և շրջանառության հարկով աշխատող ձեռնարկությունների համագործակցության հնարավորությունը»։ Տարօրինակ է, որ միջոցառման կատարող մարմիններ են նշված միայն ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը և ՀՀ կառավարությանը ենթակա պետական եկամուտների կոմիտեն, իսկ ՀՀ ֆինանսների նախարարությունն այդ գործընթացում ներգրավված չէ։

ՀՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարությունների դիրքորոշումների տարբերության մեկ այլ օրինակ է հարկային արտոնությունների նկատմամբ վերաբերմունքը։ Այսպես, ֆինանսների նախարարությունն իր վերոհիշյալ ռազմավարությունում նշում է, որ հարկային արտոնությունները պետք է կրճատվեն և սահմանվեն միայն բացառիկ դեպքերում. «Հարկային արտոնությունների ձևով պետական աջակցության որոշումը կարող է կայացվել միայն այն դեպքում, եթե կատարված վերլուծություններով և ուսումնասիրություններով հիմնավորվել է, որ այս կամ այն ոլորտի զարգացման սահմանափակումները պայմանավորված են հենց նպաստավոր հարկային միջավայրի բացակայությամբ և որ հարկային արտոնությունների տրամադրումը պետական աջակցության ամենաառաջնային և ամենաարդյունավետ քայլը կարող է լինել»։

Դրան զուգահեռ, ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարության գործողությունների ծրագրում նշվում է «Տեխնոլոգիական նորարարությունը խթանող ՓՄՁ-ների հարկային արտոնության կոնցեպտի մշակման և քննարկման, լիզինգային ընկերությունների համար հարկային արտոնության

¹⁰ <https://www.e-draft.am/projects/1986/about>

նպատակահարմարության գնահատման» մասին: Ընդ որում, երկու դեպքում էլ ՀՀ ֆինանսների նախարարությունը որպես համակատարող նշված չէ:

Ամփոփում. առայժմ չկա որևէ միասնական փաստաթուղթ, որը կնախանշեր միջնաժամկետ հատվածում հարկային քաղաքականության ուղղությունները, իսկ նախագծային փուլում գտնվող փաստաթուղթը պարունակում է ՓՄՁ-ի գործունեության պայմանները սահմանափակող բազմաթիվ նորմեր:

Հարկային քաղաքականության մշակման մասով պետական մարմինների միջև համագործակցությունը կայացած չէ:

Պետություն-մասնավոր հատված երկխոսություն

Կարծում ենք, ինչպես վերը թվարկված, այնպես էլ ՓՄՁ-ներին առնչվող բազմաթիվ այլ խնդիրներ չէին լինի, եթե «ՓՄՁ ոլորտում գործունեություն ծավալելու գրավիչ պայմանների ստեղծման» գործընթացն իրապես զուգորդվեր «գործարար և մասնագիտական համայնքի հետ ակտիվ երկխոսությամբ», ինչպես նախատեսվում էր «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ տնտեսական, այդ թվում՝ հարկային քաղաքականության մշակման ընթացքում հանրային երկխոսությունն ինստիտուցիոնալ հիմքերի վրա դրված չէ: Այն կրում է հատվածական բնույթ և ակտիվանում է հիմնականում կայացվող որոշումից առկա դժգոհությունները բարձրաձայնելու դեպքում:

ՓՄՁ-ների և պետության միջև երկխոսության միակ ֆորմալ կառույցը՝ Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհուրդը, նոր կառավարության օրոք դեռևս ոչ մի նիստ չի գումարել, չնայած ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված է, որ նիստերը գումարվում են տարեկան առնվազն չորս անգամ¹¹: Փաստորեն, ոչ միայն չեն պահպանվում ՀՀ վարչապետի որոշման պահանջները, այլև ՀՀ կառավարության և ՀՀ էկոնոմիկայի նախարարության համար էական հետաքրքրություն չի ներկայացնում «ՓՄՁ զարգացման համար արդիական հարցերի» քննարկումը գործարար համայնքի շահերը ներկայացնող կազմակերպությունների հետ:

Չի գործում նաև գործարարության աջակցման, ներդրումների խթանման և վարչարարական խոչընդոտների վերացման նպատակով 2000թ. ստեղծված

¹¹ ՀՀ վարչապետի 2011 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհուրդ ստեղծելու և դրա գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 63-Ն որոշում (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=125609>):

Գործարարության աջակցման խորհուրդը¹²: Չնայած խորհուրդը ստեղծելու վերաբերյալ ՀՀ նախագահի հրամանագիրը և խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումները ֆորմալ առումով գործում են՝ խորհրդի նիստեր չեն գումարվում և անհասկանալի է, թե պատրաստվո՞ւմ է արդյոք ՀՀ կառավարությունը շարունակելու երկխոսություն ապահովել բիզնես համայնքի հետ՝ այս ֆորմատի միջոցով:

Որպես իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների միակ ֆորմալ հարթակ ներկայումս ծառայում է e-draft.am կայքը, որի թերությունը հասարակական կարծիքի ստացումն է նախագծերի մշակումից հետո, ինչպես նաև կենդանի քննարկման բացակայությունը:

Ներկայումս չի գործում նաև իրավական ակտերի կարգավորման ազդեցության գնահատման մեխանիզմը, որը հնարավորություն կտար գնահատելու կայացվող որոշումներից բխող ծախսերն ու օգուտները և հիմքեր կստեղծեր առավել լայն հանրային քննարկման համար: Թեև այս ուղղությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից ձեռնարկվում են որոշ քայլեր, մասնավորապես e-draft.am կայքի միջոցով հանրային քննարկման էր դրվել «Կարգավորման ազդեցության գնահատման ապակենտրոնացված համակարգի ներդրման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը¹³, արդյունքներն առայժմ տեսանելի չեն, իսկ ՀՀ իրավական ակտերն ընդունվում են առանց բիզնեսի վրա ազդեցության գնահատման:

Ամփոփում. պետություն-մասնավոր հատված երկխոսության ինստիտուցիոնալ հարթակները չեն գործում, և արդյունքում ապահովված չէ պետություն-մասնավոր հատված երկխոսությունը: Կարգավորման ազդեցության գնահատման համակարգը նույնպես չի գործում, իսկ նոր համակարգը դեռևս մշակման փուլում է:

Ամփոփում

ՓՄՁ սուբյեկտների գործունեության պայմանների բարելավման ուղղությամբ կառավարության կողմից իրականացված քայլերի, առաջիկայում սպասվող փոփոխությունների և այդ որոշումներում հասարակության ներգրավվածության մասին կարելի է եզրակացնել հետևյալը.

¹² ՀՀ նախագահի 2000 թվականի դեկտեմբերի 31-ի «Գործարարության աջակցման խորհուրդ ստեղծելու մասին» ՆՀ-768 հրամանագիր և ՀՀ կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի «Գործարարության աջակցման խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին» N 131 որոշում:

¹³ <https://www.e-draft.am/projects/1911>

- Բարձրացվել է ԱԱՀ վճարող համարվելու շեմը (58.35 միլիոնից մինչև 115 մլն դրամ), ինչը հնարավորություն կտա բազմաթիվ ՓՄՁ-ների, առանց շրջանառությունը թաքցնելու, շարունակել գործել շրջանառության հարկի դաշտում:
- Ստեղծվել է գերփոքր բիզնեսի վարման առավել բարենպաստ պայմաններ նախատեսող միկրոձեռնարկատիրության հարկման համակարգը: Այն բիզնես սկսելու պարզ, ցածր հարկային բեռ նախատեսող համակարգ է և ենթադրում է նվազագույն վարչարարություն: Դրան զուգահեռ նախատեսվում է ավելացնել նվազագույն աշխատավարձի չափը, որը ստվերից դուրս գալու դեպքում լուրջ խոչընդոտ է լինելու փոքր բիզնեսի համար, հատկապես՝ մարզերում:
- Իջեցվել են եկամտային հարկի և շահութահարկի դրույքաչափերը, ինչը, սակայն, **ազդեցություն չի ունենալու ՓՄՁ սուբյեկտների համար:** Միաժամանակ, խոշոր ընկերությունների հետ մրցակցելիս այն ավելացնելու է վերջիններիս առավելությունները, քանի որ նվազում է խոշորների հարկային բեռը:
- **Չկա միասնական հարկային քաղաքականություն, որը կապահովեր կայուն և կանխատեսելի միջավայր ՓՄՁ-ների համար:** Առաջին հերթին դրա պատճառը տնտեսական զարգացման ռազմավարական փաստաթղթի բացակայությունն է, որն առնվազն կնախանշեր տնտեսության այն հիմնական ճյուղերը, որտեղ տնտեսավարողները կարող էին ակնկալել առավել բարենպաստ գործարար միջավայր: Տարբեր նախարարություններ ունեն ՓՄՁ-ների գործունեության պայմանների սեփական տեսլականը, ինչը անորոշություններ է ստեղծում ապագայի նկատմամբ:
- Հարկային քաղաքականության համար պատասխանատու մարմնի պատկերացումները հարկային քաղաքականության ապագայի վերաբերյալ չեն բխում ՓՄՁ-ների շահերից և նախատեսում են մի շարք վատթարացնող նորմեր:
- ՓՄՁ-ների զարգացման համար պատասխանատու մարմինն իր ռազմավարական փաստաթղթում ներառել է ՓՄՁ-ների աջակցության գործիքակազմին վերաբերող բազմաթիվ միջոցառումներ, սակայն չի ներկայացրել առավել կարևորը՝ ՓՄՁ-ների գործունեության հարկային միջավայրի վերաբերյալ իր հստակ պատկերացումները:
- **Պետություն-մասնավոր հատված երկխոսության ինստիտուցիոնալ մեխանիզմները չեն գործում:**
- ՓՄՁ-ներին վերաբերող իրավական ակտերի փոփոխությունների վերաբերյալ **պատշաճ հանրային քննարկումներ չեն իրականացվում,**

գործարար համայնքի կարծիքը դժվարությամբ է հասնում քաղաքականություն մշակողներին:

- Իրավական ակտերի նախագծերն ազդեցության գնահատման չեն ենթարկվում, նախագծերի ընդունման անհրաժեշտությունը, դրանց հետևանքները անհրաժեշտ չափով չեն հիմնավորվում:

ՄԱՍ 2. ՓՄՁ-ՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

ՀՀ կառավարության ծրագիր

Թիրախ 3. Կաջակցվեն «գրոյից» բիզնես ստեղծելու ձգտում ունեցող քաղաքացիների հմտությունների զարգացումը և նրանց ծրագրերի իրագործումը՝ գործնական միջանցք ապահովելով նոր գործարար նախաձեռնությունների իրականացման համար: Այդ նպատակով կառավարությունը կհամագործակցի ՓՄՁ-ների շահերը ներկայացնող հասարակական կառույցների հետ, մասնավորապես՝ տարածքային ձեռներեցության կենտրոններ ձևավորելու և զարգացնելու միջոցով:

Թիրախ 4. Մեծ նշանակություն է տրվելու նաև ՓՄՁ-ների սուբյեկտների համար ֆինանսների հասանելիության բարձրացման ուղղությամբ ծրագրերի իրականացմանը:

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

Թիրախ 3. գործարար և մասնագիտական համայնքի հետ ակտիվ երկխոսությամբ մշակվելու է ՓՄՁ և ձեռներեցության զարգացմանն ուղղված միջոցառումների փաթեթ:

ՓՄՁ-ների զարգացման պետական քաղաքականության իրավական հենքը

Հայաստանում ՓՄՁ-ների աջակցությանը միտված հիմնական փաստաթուղթը 2000 թվականին ընդունված «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքն (այսուհետ՝ Օրենք) է, որը սահմանում է ՓՄՁ սուբյեկտների չափորոշիչները, պետական աջակցության հիմնական ուղղությունները և այդ ոլորտում պետական քաղաքականության իրականացման սկզբունքները: Օրենքի 3-րդ հոդվածում սահմանվում են այն հիմնական ուղղությունները, որոնք ենթակա են պետական աջակցության՝ իրավական բարենպաստ դաշտի ձևավորում, ֆինանսական և ներդրումային աջակցություն, երաշխիքների տրամադրում, աջակցող ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանը նպաստում, տեղեկատվական և խորհրդատվական օգնություն, արտաքին տնտեսական գործունեության խթանում, նորարարական

գործունեության և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցություն, բարենպաստ հարկային քաղաքականության իրականացում, կադրերի պատրաստում և վերապատրաստում, վիճակագրական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման պարզեցված համակարգերի ստեղծում, պետական գնումների իրականացման գործընթացում աջակցություն:

Համաձայն Օրենքի 4-րդ հոդվածի՝ ՓՄՁ-ների պետական աջակցությունն իրականացվում է տարեկան ծրագրով, որը մշակում և հաստատում է ՀՀ կառավարությունը: Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նշվում է պետական բյուջեում առանձին տողով:

ՓՄՁ-ներին ուղղված պետական քաղաքականությանը անդրադառնում նաև ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»¹⁴, որտեղ սահմանված են ՓՄՁ-ների ուղղակի աջակցության հիմնական ուղղությունները:

Չնայած նշված փաստաթղթի ֆորմալ գոյությանը (այն իրավական առումով գործող է, տեղադրված է ՀՀ կառավարության կայքում)՝ կառավարությունը հայտարարել է «տնտեսական հեղափոխության» և զարգացման նոր տեսլականի մասին, որի պարագայում նախորդ կառավարության ռազմավարությունը, կարծում ենք, այլևս արդիական չէ: Միաժամանակ, չկա դրան փոխարինող որևէ այլ փաստաթուղթ, որից հնարավոր լինի պատկերացում կազմել ՓՄՁ-ների երկարաժամկետ զարգացմանն ուղղված պետական քաղաքականության ուղղությունների մասին: Այս պայմաններում կառավարության տեսլականի մասին պատկերացումներ կարելի է կազմել իրականացվող կոնկրետ գործողությունների, ինչպես նաև առավել ցածր մակարդակի ռազմավարական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

Ներկայումս հանրային քննարկման ներկայացված ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությանը կից նախատեսվում է նաև գործողությունների ծրագիր, որի մի մասը ենթադրաբար ուղղված է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՓՄՁ ՋԱԿ) գործունեության ակտիվացմանը: Օրինակ՝ երաշխավորությունների հիմնադրամի դրամագլխի ավելացում, բանկային համակարգի հետ ռիսկերը կիսելու եղանակով ՓՄՁ վարկավորման գործիքի ներդրում, գործող ՓՄՁ-ների նորարարական նախագծերի ֆինանսական աջակցության գործիքի մշակում (քննարկում շահառուների և ֆինանսական շուկայի ներկայացուցիչների հետ), գործող ՓՄՁ-ների նորարարական նախագծերի ֆինանսական աջակցության գործիքի

¹⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=89968>

ներդրում, «Սկսնակ ձեռնարկատեր» ծրագրի իրականացում, արտադրական տարբեր ոլորտների համար մատչելի գործարար ուղեցույցների և մոդելների մշակում, ՓՄՁ աշխատակիցների մասնագիտական կարողությունների վերապատրաստումների համաֆինանսավորման ծրագրի մշակում, ՓՄՁ աշխատակիցների մասնագիտական կարողությունների վերապատրաստումների համաֆինանսավորման ծրագրի ներդրում, մենթորշիփներ, փորձի փոխանակման թեյնինգներ ՀՀ բոլոր մարզերում և այլն:

Գործողությունների ծրագիրը բավականին ընդգրկուն է, հաշվի է առնում առկա մարտահրավերները և հիմնականում ներառում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Փոքր բիզնեսի ակտի ուղղությունները: Միակ ուղղությունը, որին խորքային անդրադարձ չկա՝ ՓՄՁ-ների գործունեության օրենսդրական դաշտն է: Այս մասով նախատեսված միակ գործողությունը «ՓՄՁ-ների կողմից բարձրաձայնված խնդիրների օրենսդրական լուծումների մշակումն» է, որը «Հարկային/մաքսային/այլ վարչարարական բեռի գնահատում և պարզեցում ՓՄՁ-ների համար» բաժնի միակ միջոցառումն է: Ստացվում է, որ ՓՄՁ-ների զարգացման համար պատասխանատու մարմնի՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից պրոակտիվ քաղաքականություն չի նախատեսվում**, այլ միայն բարձրաձայնված խնդիրների լուծում: Չնայած գործողությունների ծրագրում նման ձևակերպման առկայությանը՝ ռազմավարությունում նշվում է, որ «կառավարությունը մտադիր է իրականացնել վարչարարական բեռի խորքային գնահատում, վեր հանել բեռի առաջացման հիմքերը, մասնավոր հատվածի հետ քննարկումների արդյունքում մշակել հնարավոր լուծումների փաթեթ և փոխադարձ համաձայնությամբ իրականացնել առավել բարձր ազդեցություն ունեցող լուծումները»: Մնում է միայն հուսալ, որ փաստաթղթի շրջանառության հետագա փուլերում այն կհամալրվի պրոակտիվ գործողություններ նախատեսող միջոցառումներով և չի բավարարվի միայն բարձրաձայնված խնդիրների լուծմամբ:

Այս համատեքստում արժե նշել, որ նմանատիպ գործողություններ են նախատեսվում նաև ՀՀ կառավարության 2019–2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին վերաբերող հատվածում: Մասնավորապես, որպես ծրագրի 355-րդ՝ «Հարկային մարմին - հարկ վճարող գործընկերային հարաբերությունների հաստատում» միջոցառման ենթամիջոցառում նախատեսվում է «Հարկային և մաքսային վարչարարության ընթացակարգերի վերաբերյալ հարցումների կազմակերպում»: Խնդիրն այն է, որ միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2021 և 2023թթ. տարեվերջին, իսկ հարցումների արդյունքում պարզ չէ, թե ինչ է նախատեսվում: Ստացվում է, որ մինչև 2021 թվականը հարկային և մաքսային

վարչարարության բարելավումն իրականացվելու է առանց հարկ վճարողների կարծիքի համապարփակ ուսումնասիրության: Այս տեսանկյունից առավել արդյունավետ կլինեն, որպեսզի ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը նախատեսեր առավել արագ բիզնեսի կարծիքի հավաքագրում, որի հիման վրա կառաջարկեր հարկային և մաքսային բնագավառի վարչարարության պարզեցման գործողություններ կամ առնվազն՝ ուղղություններ:

Ամփոփում. ՓՄՁ-ի պետական աջակցության որևէ նոր փաստաթուղթ չի մշակվել՝ ՓՄՁ-ի պետական աջակցության հիմնարար օրենքը փոփոխության չի ենթարկվել, իսկ մշակվող ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարության նախագիծը դեռևս քննարկման փուլում է:

ՓՄՁ-ների աջակցության ինստիտուցիոնալ կառույցները և ծրագրերը

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն

ՓՄՁ պետական աջակցության 2002թ. ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության 2002թ. մարտի 19-ի N 282 որոշմամբ հիմնադրվել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը¹⁵, որը Հայաստանում ՓՄՁ ոլորտի պետական քաղաքականությունը և ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնող հիմնական կառույցն է:

ՓՄՁ ԶԱԿ-ը գործում է ՀՀ պետական բյուջեից և միջազգային դոնոր կազմակերպություններից ստացվող ֆինանսական միջոցներով՝ տարեկան ծրագրերի հիման վրա: Այդ ծրագրերն ինքնուրույն փաստաթղթեր են և ուղղակիորեն չեն բխում որևէ ռազմավարական փաստաթղթից:

ՓՄՁ ԶԱԿ-ի վերջին 3 տարիների գործունեության ծրագրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրա գործունեության ուղղվածությունն էական փոփոխությունների չի ենթարկվել: Հավելված 1-ում բերված տվյալներից պարզ է դառնում, որ իրականացվող միջոցառումները հիմնականում նույնական են և որոշ բացառություններով կրկնում են միմյանց:

Հիմնական տարբերությունները հետևյալն են.

- 2019 թվականի համար, ի տարբերություն 2017 և 2018թթ., նախատեսված չեն միջոցառումներ՝ ուղղված ՓՄՁ ԶԱԿ-ի աշխատողների մասնագիտական

¹⁵ Ի դեպ, համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալի 01.11.2019թ. թիվ 07/10693-2019 գրության, ՓՄՁ ԶԱԿ-ը վերանվանվել է «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ:

հմտությունների զարգացման և որակավորման բարձրացմանը, աջակցության ծրագրերում գործընկեր կազմակերպությունների ներգրավմանը, ինչպես նաև կին գործարարների համար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական բնույթի միջոցառումների կազմակերպմանը:

- Նվազել է գործարար ուսուցողական դասընթացներին մասնակցող սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների թիվը՝ նախորդ 2 տարիներին միջին հաշվով 350-ից 2019 թվականի համար նախատեսելով 150-200:

ՓՄՁ ՁԱԿ-ի գործունեության առանցքային՝ ՓՄՁ սուբյեկտներին և սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցության (վարկային երաշխավորությունների տրամադրման) ուղղությամբ ևս նախատեսվում է նախորդ տարվա ցուցանիշը կրկնող թիրախ (2018թ.՝ աջակցություն 20-30, 2019թ.՝ 25-30 սուբյեկտի): Իհարկե, նախորդ տարիներին փաստացի ֆինանսական աջակցություն ստացած ՓՄՁ-ների թիվն ավելի մեծ է՝ 2017 և 2018թթ. համապատասխանաբար 81 և 64, ինչը թերևս պայմանավորված է այլ աղբյուրներից ստացված միջոցների հաշվին աջակցության հնարավորությունների ընդլայնմամբ¹⁶:

Անընդհատ փոփոխվող օրենսդրության պայմաններում և հատկապես 2020 թվականից ուժի մեջ մտնող լայնամասշտաբ փոփոխությունների պայմաններում ՓՄՁ-ների կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացների կրճատումը համահունչ չէ ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված խոստմանը: ՓՄՁ սուբյեկտները, հատկապես մարզերում, չեն կարողանում յուրացնել պարբերաբար փոփոխվող օրենսդրության նոր պահանջները: Այն մի կողմից՝ հնարավորություն չի տալիս տեղեկանալու նոր հնարավորություններին, որոնք կարող են առավել նպաստավոր պայմաններ ստեղծել վերջիններիս համար, մյուս կողմից՝ հատկապես հարկային օրենսդրության բարդ շարադրանքը հաճախ ունենում է մեկնաբանության կարիք, որն անհամեմատ պակաս հասանելի է մարզերում: Իհարկե, ՓՄՁ ՁԱԿ-ի գործունեությունը հիմնականում ուղղված է մարզերին (ավելի քան 96%-ը), սակայն Երևանի և մարզերի միջև առկա բևեռացվածության

¹⁶ «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 22.02.2017թ. N 148-Ա հրաման, «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 19.03.2018թ. N 196-Ա հրաման, «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» 2019 թվականի ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 25.02.2019թ. N117-Ա հրաման:

պայմաններում մարզերի գործարարներն ունեն անհամեմատ մեծ աջակցության կարիք: Այդ են վկայում նաև ՓՄՁ-ների շահերը պաշտպանող կառույցների հետ քննարկումների, ինչպես նաև մարզերում գործող փոքր բիզնեսի ներկայացուցիչների հետ հանդիպման արդյունքները:

Ասվածի լույսի ներքո զարմանալի է նաև ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային մասնաճյուղերի աշխատողների թվաքանակի կրճատումը՝ 2018թ. 22-ից 2019թ. նվազեցվելով մինչև 10 մարդ¹⁷: Անհասկանալի է, թե ինչպես է յուրաքանչյուր մարզում 1 հոգով կառավարությունն ապահովելու ՓՄՁ-ների աջակցության վերաբերյալ իր խոստումներն այն պարագայում, երբ մարզային ռեսուրսը ՓՄՁ-ներին չէր բավարարում անգամ նախկինում:

Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալի թիվ 07/10693-2019 գրության (տե՛ս Հավելված 2)՝ պետական աջակցության ծրագրերի ֆինանսավորումը 2018-2019 թվականներին փոփոխության չի ենթարկվել: Այս տեղեկատվությունը, սակայն, չի համապատասխանում «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» 2019 թվականի ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 25.02.2019թ. N117-Ա հրամանի¹⁸ 1-ին հավելվածի 40-րդ կետին, համաձայն որի՝ ծրագրի իրականացման համար նախատեսվում է հատկացնել 183,120.0 հազ. ՀՀ դրամ, ինչն ավելի քան 30 մլն դրամով ավելի է 2018 թվականին հատկացված գումարից¹⁹: Սա ևս մեկ անգամ վկայում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում կա՛մ ինստիտուցիոնալ հիշողության բացակայության, կա՛մ էլ անբարեխիղճ աշխատանքի մասին:

Ընդ որում՝ 2018-2019 թվականների ընթացքում նվազել է ՓՄՁ ԶԱԿ-ին (Ներդրումների աջակցության կենտրոնին) ոլորտի զարգացման նպատակով միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված աջակցությունը: Իսկ այսօր դեռևս շարունակվող ծրագրերը նախաձեռնվել էին մինչև 2018 թվականը: Փաստորեն, գրեթե երկու տարվա ընթացքում կազմակերպությանը չի հաջողվել ոչ միայն պահպանել նախկինում գործող օտարերկրյա կամ միջազգային դոնոր աջակցության նոր ծրագրեր, այլև սկսել նորերը²⁰:

¹⁷ Տեղեկությունը տրամադրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը՝ մեր հարցմանն ի պատասխան ներկայացված 07/10693-2019 գրությամբ:

¹⁸ <https://mineconomy.am/media/6866/a.pdf>

¹⁹ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2018 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ՝ հաշվետվություն, <https://smednc.am/media/2019/10/09/ad66f9eac80f207ce3e98d0a89b9b39b0844bb18.pdf>

²⁰ ՓՄՁ ԶԱԿ 2017թ.-2019թ. հունվար-սեպտեմբերի հաշվետվությունները (<https://smednc.am/media/2019/10/09/d7fa8c4804fabf8cde5be4dcbcf9cb2c68148fb5.pdf>;

Ի դեպ, ՀՀ էկոնոմիկայի նախարարության տրամադրած տեղեկատվությունից հայտնի դարձավ, որ ՓՄՁ ԶԱԿ-ը վերանվանվել է «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ» (ՆԱԿ), սակայն վերջինիս կայքում (www.smednc.am) դեռևս օգտագործվում է հին անվանումը: ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստրում անվանափոխությունն իրականացվել է²¹, սակայն ՆԱԿ-ը չի թարմացրել իր կայքը և հետևաբար չի ապահովում տեղեկատվության հասանելիությունը հասարակությանը: Ավելին, այսօր դեռևս անհասկանալի է, թե ինչով է զբաղվելու անվանափոխված հիմնադրամը: Եթե այն աշխատելու է ներդրողների հետ, ապա անհասկանալի է, թե ինչու է պետությունը հրաժարվել երկար տարիներ պետական բյուջեից հատկացվող միջոցների հաշվին համապատասխան մասնագիտական կարողություններ ստեղծած կառույցից («Բիզնես Արմենիա» հիմնադրամ): Արդյունքում ստացվում է այնպես, որ արդեն ավելի քան վեց ամիս ներդրողների հետ աշխատանքներ չեն տարվում, խորհրդատվություն չի տրամադրվում, և ևս մի քանի ամիս կշարունակվի այդ վիճակը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անվանափոխված հիմնադրամին դեռևս անհրաժեշտ է լինելու ներգրավել մասնագետներ, վերապատրաստել նրանց, ապա սկսել աշխատել ներդրողների հետ: Մյուս հարցն այն է, թե ինչպես է գործելու այդ կառույցը՝ արդյո՞ք այն դադարեցնելու է ՓՄՁ-ների հետ իրականացվող աշխատանքները, թե՞ դրանք սահմանափակվելու են՝ նոր գործառույթներ ավելանալու պատճառով:

Ամփոփում. Ներդրումների աջակցման կենտրոնի «պետական ֆինանսավորումը չի ավելացել», իսկ որոշ միջոցառումներ 2019թ. կրճատվել են: Ավելի քան 2 անգամ կրճատվել է նաև մարզային մասնաճյուղերի աշխատողների թիվը՝ յուրաքանչյուր մարզում թողնելով 1 հոգի: Չնայած ՓՄՁ ԶԱԿ-ի վերանվանմանը՝ հայտնի չէ, թե ինչ գործառույթներ է այն իրականացնելու և ինչպես է պաշտպանելու ՓՄՁ-ների շահերը կամ իրականացնելու ՓՄՁ աջակցության ծրագրեր:

Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա

«Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ունիվերսալ վարկային կազմակերպությունը (ՈՒՎԿ) ստեղծվել է 2009թ.՝ ՓՄՁ ԶԱԿ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն: Չնայած ընկերությունն իր կայքում որպես նպատակ չի սահմանում ՓՄՁ-ների

<https://smednc.am/media/2019/10/09/ad66f9eac80f207ce3e98d0a89b9b39b0844bb18.pdf>;

<https://smednc.am/media/2019/10/17/236821875e9f5963e84582bcece053cf206c21da.docx>

²¹ <https://www.e-register.am/am/companies/1246125>

աջակցությունը՝ այն հիմնադրվել է ՓՄՁ-ների զարգացմանը և ՀՀ մարզերի համաչափ զարգացումն ապահովելու նպատակով: Դատելով ՌԻՎԿ-ի գործունեության տարեկան հաշվետվություններում առկա ձևակերպումներից՝ սկսած 2017 թվականից **ՓՄՁ-ների վարկավորումը որպես հիմնական գերակայություն չի դիտվում**, այլ շեշտվում է տնտեսության համար ռազմավարական կարևորություն ունեցող ոլորտների զարգացմանն աջակցելը:

ՌԻՎԿ-ի կողմից մատուցվող ծառայություններն են՝ վարկերի, լիզինգի և երաշխիքների տրամադրումը: Վարկերի տրամադրման գործընթացում ՌԻՎԿ-ն համագործակցում է ՆԱԿ-ի հետ՝ իրականացնելով վերջինիս կողմից գրավադրվող դրամական միջոցներով ապահովված վարկերի տրամադրում ՓՄՁ սուբյեկտներին: Վարկավորման ծրագրերում կարևոր դեր ունեն գյուղատնտեսության ոլորտում պետության կողմից սուբսիդավորմամբ իրականացվող ծրագրերը: Այդ ծրագրերն իրականացվում են նաև այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից և ՌԻՎԿ-ի մենաշնորհը չեն:

Լիզինգային ծառայությունները ևս վերաբերում են գյուղատնտեսության ոլորտին և իրականացվում են պետության կողմից սուբսիդավորվող ծրագրերի շրջանակներում: Դրանք ներառում են գյուղատնտեսական տեխնիկայի և ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգը:

Երաշխիքների տրամադրումն իրականացվում է մրցույթի մասնակցության, կանխավճարի ապահովման, պայմանագրի կատարման, որակի (հետավարտման) և արտահանման ուղղություններով:

Երաշխիքների տրամադրման ոլորտում ՌԻՎԿ-ն համագործակցում է նաև ՓՄՁ-ներին ծառայություններ մատուցող մեկ այլ կառույցի՝ **«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության (ԱՓԲԸ)** հետ:

ՌԻՎԿ-ի ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ 2019 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում կազմակերպության շահույթը (մինչև հարկումը) նվազել է մոտ 80 մլն ՀՀ դրամով, ինչի արդյունքում շուրջ վեց միլիոն դրամով նվազել է ՀՀ պետական բյուջե մուծվող շահութահարկի գումարը²²:

²² «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՌԻՎԿ-ի 2019թ. երրորդ եռամսյակի միջանկյալ հաշվետվություն (<http://dica.am/wp-content/uploads/2019/10/%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AD%D5%A2%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%B4%D5%AB%D5%BB%D5%A1%D5%B6%D5%AF%D5%B5%D5%A1%D5%AC-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf>)

2019 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ աճել է նաև այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները՝ կազմելով 1,5 մլրդ ՀՀ դրամ, 2018 թվականի մոտ մեկ միլիարդ ՀՀ դրամի նկատմամբ: 2017 թվականի համեմատ 2018թ. շուրջ մեկ միլիարդ դրամով նվազել է հաճախորդներին տրված վարկերը: 2019 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ այս միջոցների տրամադրումը գրեթե չի փոխվել՝ համեմատելով 2018-ի ամբողջ ժամանակաշրջանի հետ: Այսինքն՝ 2018 թվականին նվազել է ՓՄՁ-ների հետաքրքրությունը ՈԻՎԿ-ի կողմից տրամադրվող միջոցների նկատմամբ, ինչը պահպանվել է նաև 2019-ին:

Ենթադրվում է, որ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և հաճախորդներին տրամադրվող վարկերը միմյանց հետ փոխկապակցված են, քանի որ 2018 թվականին հաճախորդներին տրված վարկերի նվազումը արտահայտվել է ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների աճով: Իսկ այս պահանջները հիմնականում արտահայտվում են բանկերում ներդրված ավանդների տեսքով²³: Փաստորեն, ընկերությունը ՓՄՁ-ների զարգացմանը նպաստելու և նրանց ֆինանսական միջոցներ տրամադրելու փոխարեն՝ ավելացնում է իր բանկային ավանդները՝ դրանով իսկ փորձելով ապահովել իր տարեկան եկամուտները:

Ամփոփում. Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիան շարունակում է որոշակիորեն նպաստել ՓՄՁ-ների համար ֆինանսների հասանելիությանը: Այնուամենայնիվ, չպետք է մոռանալ, որ Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիան շահույթ ստանալու նպատակ հետապնդող ընկերություն է և տրամադրում է առևտրային բնույթի ծառայություններ, որոնք կարող են տրամադրվել նաև մասնավոր ընկերությունների կողմից: Ընկերությունը, կառավարության խոստումներն իրականացնելու համար, պետք է հանդես գար նոր մոտեցումներով ու գործիքակազմով, սակայն դրանց փոխարեն ավելացնում է իր բանկային ավանդները:

Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն

ՓՄՁ զարգացման և միջազգայնացման գործում իր առանձնահատուկ դերն ունի «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), որը հիմնադրվել է ՀՀ կառավարության 2013 թվականի

²³ «Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈԻՎԿ-ի 2018թ. ֆինանսական հաշվետվություն, էջ 40 ([http://dica.am/wp-content/uploads/2019/06/DICA%20FS%20ARM%202018%20signed%20\(1\).pdf](http://dica.am/wp-content/uploads/2019/06/DICA%20FS%20ARM%202018%20signed%20(1).pdf))

հոկտեմբերի 17-ի թիվ 1129-Ա որոշմամբ²⁴: Ընկերության ընդհանուր կապիտալը սահմանվել էր 1,950,000.0 հազ. ՀՀ դրամ, որից կանոնադրական կապիտալը՝ 1,5 մլրդ ՀՀ դրամ և 450,000.0 հազ. դրամը՝ որպես երաշխիքային հիմնադրամ:

ԱՓԲԸ-ն 100% պետական մասնակցությամբ ընկերություն է, որը տրամադրում է ապահովագրություն ՀՀ ռեզիդենտ արտահանող ընկերությունների կողմից մատակարարված ապրանքի դիմաց օտարերկրյա գնորդի կողմից կամ պայմանագրով նրա անունից վճարման պարտավորություն ունեցող բանկի կողմից չվճարման հետևանքով կրած ֆինանսական վնասներից:

ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշմամբ Ընկերության պետական սեփականություն հանդիսացող 100 տոկոս բաժնետոմսերի փաթեթի կառավարման լիազորությունը ծայների հավասար իրավունքով (յուրաքանչյուրին 20%) վերապահվել էր ՀՀ էկոնոմիկայի, ֆինանսների, արտաքին գործերի, գյուղատնտեսության և էներգետիկայի և բնական պաշարների նախարարություններին: Սույն բաշխման մասին ներկայացված է նաև Ընկերության կողմից պարբերաբար հրապարակվող հաշվետվություններում, այդ թվում՝ 2019 թվականի երրորդ եռամսյակի ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվությամբ և դրան կից ծանոթագրություններում:

Սակայն, ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 17-ի N 1129-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1600-Ա որոշմամբ որոշվել է ընկերության պետական սեփականություն հանդիսացող 100 տոկոս բաժնետոմսերի փաթեթի կառավարման լիազորությունը վերապահել ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը²⁵: Ընդ որում, փոփոխության հիմնավորման մեջ նշվում է, որ այդ լիազորությունները վերապահվել են էկոնոմիկայի նախարարությանը, քանի որ վերջինիս կանոնադրության 9-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ նախարարության խնդիրը հանդիսանում է «արտահանման խթանումը և արտաքին տնտեսական կապերի զարգացումը»: Սա բավական զարմանալի հիմնավորում է, քանի որ ընկերության հիմնադրման ժամանակ ևս ՀՀ էկոնոմիկայի նախարարության խնդիրներից էր արտահանման խթանումը, սակայն բաժնետոմսերը համաչափ բաշխվել էին մի քանի նախարարությունների միջև:

Ու թեև այս փոփոխության մասին տեղեկատվությունը հրապարակվել է ընկերության կայքի «Սեփականատերեր» բաժնում, կայքի այլ՝ «Հաշվետվություններ/Բաժնետերեր և ներդրողներ», «ՀՏՀ», մասերում,

²⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86841>

²⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=136391>

ներկայացվում է տեղեկատվություն 5 բաժնետերերի մասին՝ դրանով իսկ շփոթության մեջ գցելով այցելուներին և տնտեսավարողներին (տե՛ս Նկար 2):

Նկար 2. Հարված «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի կայքից՝ բաժնետերերի վերաբերյալ, նոյեմբեր, 2019

Ի՞նչպես է որոշվում ապահովագրական սակագինը	+
Ի՞նչպե՞ս և ե՞րբ կարող եմ ստանալ ապահովագրական հատուցում «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի	+
Ի՞նչպե՞ս կարող եմ ձեռք բերել արտահանման ապահովագրություն	+
Որտեղի՞ց կարող եմ ծանոթանալ դիմումի ձևին և պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին	+
Ովքե՞ր են «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի բաժնետերերը «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի միակ բաժնետերը Հայաստանի Հանրապետությունն է: Պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահվում է հետևյալ նախարարություններին՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն (20%), ՀՀ ֆինանսների նախարարություն (20%), ՀՀ արտաքին գործերի նախարարություն (20%), ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (20%), ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն (20%):	-
Որտե՞ղ է գտնվում «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի գրասենյակը	+

Համաձայն կանոնադրության՝ ընկերությունն իրականացնում է՝

- վարկի ապահովագրություն,
- երաշխիքի տրամադրում,
- ֆինանսական վնասների ապահովագրություն:

Ընկերության գործունեության մասին կայքում առկա ամենաթարմ հաշվետվությունը 2018 թվականին իրականացված աշխատանքների մասին հաշվետվությունն է²⁶, որտեղ միայն նշվում է Ընկերությանը հայտ ներկայացրած տնտեսավարող սուբյեկտների և ներկայացված հայտերի մասին, տրված ապահովագրական վկայականների թվի, ապահովագրական գումարների և հավաքագրված ապահովագրավճարների մասին տեղեկատվությունը: 2019 թվականի համար ներկայացված է միայն 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների ֆինանսական հաշվետվությունները՝ չներկայացնելով տեղեկատվություն կատարված աշխատանքների մասին:

²⁶ <http://www.eia.am/news/%D5%B0%D5%A1%D5%A1%D5%A3-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A1%D6%80%D5%A4%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%B8%D5%BE-2018-%D5%A9%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%AB%D5%B6-%D5%A3%D6%80%D5%A1%D5%B6%D6%81%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A7-%D6%81%D5%B8%D6%82%D6%81%D5%A1%D5%B6%D5%AB%D5%B7%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A6%D5%A3%D5%A1%D5%AC%D5%AB-%D5%A1%D5%B3.html>

Համաձայն հրապարակված հաշվետվությունների՝ Ընկերությունը 2018 թվականին ստացել է 93 ապահովագրական հայտ, ինչը 6-ով քիչ է, քան 2017 թվականին²⁷: 2018 թվականի ընդհանուր ապահովագրական գումարը կազմել է 7,851,160,117 ՀՀ դրամ (նախորդ տարվա նկատմամբ աճը՝ 1.73 անգամ): Այստեղ, սակայն, նկատվում է ապահովագրական գումարների աճի տեմպի անկում, քանի որ 2017 թվականին այն աճել է ավելի քան երկու անգամ 2016-ի համեմատ: Ի դեպ, դա բավականին ցածր ցուցանիշ է արտահանման խթանման նպատակ ունեցող կառույցի համար:

Հավաքագրված համախառն ապահովագրավճարը 2018 թվականին գերազանցել է 2017-ի ցուցանիշը մոտ երկու անգամ՝ կազմելով 75,5մլն ՀՀ դրամ: Այնուամենայնիվ նույնիսկ այս ցուցանիշով 2018 թվականը զիջում է 2017-ին արձանագրած տեմպերին՝ 2017թ. հավաքագրվել է 3,18 անգամ ավելի շատ, քան 2016-ին (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Համախառն ապահովագրավճարները 2016-2018թթ. (հազ. ՀՀ դրամ)

	2018	2017	2016
Համախառն ապահովագրավճարներ	75,545	39,094	12,290

Աղբյուր՝ «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի հաշվետվություններ

Ավելին, Ընկերության ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրությունը բացահայտում է առավել հետաքրքիր փաստեր: Մասնավորապես, յուրաքանչյուր տարի աճում են ընկերության ժամկետային ավանդները բանկերում՝ 2016թ. մոտ 1 մլրդ դրամից հասնելով 1,7մլրդ դրամի՝ 2019թ. 3-րդ եռամսյակում (տե՛ս Աղյուսակ 3):

2019 թվականի երրորդ եռամսյակում զգալիորեն նվազել են նաև սպասվելիք (ստացվելիք) ապահովագրավճարները՝ կազմելով 3,321 հազ. դրամ, 2018 թվականի նույն ժամանակաշրջանի 10,669 հազ. դրամի համեմատ:

²⁷ <https://mineconomy.am/news/894>

Աղյուսակ 3. «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ ժամկետային ավանդները բանկերում 2016-2019թ. III եռամսյակում (հազ. ՀՀ դրամ)

	2019 (III եռամսյակ)	2018	2017	2016
Ժամկետային ավանդներ բանկերում	1,725,122	1,653,325	1,607,457	1,048,808

Աղբյուր՝ «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի հաշվետվություններ

Ընկերության 2019 թվականի երրորդ եռամսյակի «Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին» հաշվետվության ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ վերջինիս շահույթը երրորդ եռամսյակում, նախքան շահութահարկով հարկումը, կազմել է (-9,511) հազ. ՀՀ դրամ, այն դեպքում, երբ 2018 թվականի նույն ժամանակահատվածում այն կազմում էր 37,832 հազ. դրամ: Այսինքն՝ 2019 թվականի երրորդ եռամսյակում ընկերությունն աշխատել է վնասով: Ամենայն հավանականությամբ, Ընկերությունը արդյունավետ չի աշխատել ամբողջ 2019 թվականի ընթացքում, քանի որ վերջինիս շահույթը, նախքան շահութահարկ վճարելը՝ 2019թ. սկզբից մինչև երրորդ եռամսյակը ներառյալ, կազմել է ընդամենը 46,932 հազ. ՀՀ դրամ կամ մոտ երկու անգամ պակաս, քան 2018 թվականի նույն ժամանակահատվածում:

Արդյունքում, Ընկերության համապարփակ եկամուտը 2019 թվականի երրորդ եռամսյակում կազմել է (-15,035) հազ. ՀՀ դրամ՝ 2018 թվականի 27,225 հազ. դրամի համեմատ:

Հարկ է նշել նաև, որ արտահանման խթանման համար պատասխանատու համարվող ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայքում 2018 թվականից հետո չի հրապարակվում որևէ տեղեկատվություն Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների և իրականացված աշխատանքների մասին, ինչը կարող էր բավականին օգտակար լինել արտահանողների համար:

Այսպիսով՝

- ՓՄՁ-ների արտահանման ծավալների աճին նպաստող գործառույթներ իրականացնող կազմակերպություններից մեկը վերջին **երկու տարիների ընթացքում չի իրականացրել որևէ հեղափոխական գործունեություն,**

արտահանման խթանմանը նպաստող միջոցներն ընդլայնելու և նոր գործիքակազմ ներդնելու փոխարեն իրականացրել է միայն առկա գործիքակազմի ընթացիկ կառավարում՝ 2019 թվականին գրանցելով շահույթի անկում: Ընդ որում, վերջին երկու տարիների ընթացքում ընկերությունը հետևողականորեն ավելացրել է իր ժամկետային ավանդները բանկերում՝ դրանով իսկ փորձելով ապահովել իր տարեկան եկամուտների ինչ-որ մի մասը: Եվ եթե ընկերության գործունեության առաջին տարիներին նման մոտեցումը կարելի էր համարել տրամաբանական, հիմնադրումից 6 տարի անց ֆինանսական միջոցները բանկերում ավանդի տեսքով պահելն առնվազն անհասկանալի է:

- արտահանման խթանումը որպես հիմնական նպատակներից մեկը ձևակերպած ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը 2018 թվականի սեպտեմբերից սկսած չի հրապարակում որևէ տեղեկատվություն Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության գործունեության վերաբերյալ՝ դրանով իսկ արտահանողներին և ՓՄՁ-ներին չտրամադրելով արտահանման համար կարևոր նշանակություն ունեցող տեղեկատվություն: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հետաքրքրված չէ այս կառույցի գործունեությամբ կամ չի կարևորում այդ մարմնի դերը արտահանման խթանման գործում:

Ամփոփում

Կառավարության կողմից ՓՄՁ սուբյեկտներին աջակցության տրամադրման մեխանիզմների մասով կարելի է եզրակացնել հետևյալը.

- ՓՄՁ-ների պետական աջակցության իրավական հիմքերը որևէ փոփոխության չեն ենթարկվել:
- Աջակցության հեռանկարի առումով անելիքները հստակ չեն. ՓՄՁ զարգացման ռազմավարության նախագիծը քննարկման փուլում է և կառավարության դիրքորոշումն առայժմ հայտնի չէ:
- ՓՄՁ-ների աջակցության հիմնական կառույցը շարունակում է մնալ ՓՄՁ ԶԱԿ-ը, որը վերանվանվել է Ներդրումների աջակցման կենտրոն: Միաժամանակ, հայտնի չէ կենտրոնի հետագա գործառույթների բովանդակությունը:
- «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի ֆինանսավորումը չի ավելացել: Ավելացում նախատեսվում է ռազմավարության նախագծով, ինչը միայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության դիրքորոշումն է:

- Ռազմավարության նախագծով նախատեսվել են ՓՄՁ-ների աջակցության բազմաթիվ գործիքներ, որոնք պահանջելու են թե՛ ֆինանսական, թե՛ մարդկային ռեսուրսներ: Միաժամանակ, ռազմավարության իրագործման հիմնական կառույցի՝ Ներդրումների աջակցման կենտրոնի մարզային աշխատողների թիվը կրճատվել է՝ յուրաքանչյուր մարզում նախատեսելով 1 աշխատողի հաստիք: Ավելին, մինչ օրս չեն ստեղծվել խոստացված տարածքային ձեռներեցության կենտրոնները և առայժմ հստակ չեն դրանց ձևավորման մոտեցումները:
- Կրճատվել են Ներդրումների աջակցման կենտրոնի աշխատողների մասնագիտական հմտությունների զարգացման և որակավորման բարձրացմանը, աջակցության ծրագրերում գործընկեր կազմակերպությունների ներգրավմանը, ինչպես նաև կին գործարարների համար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական բնույթի միջոցառումները:
- Ռազմավարության նախագծով ՓՄՁ-ներին հուզող առաջնային խնդիրների՝ հարկային օրենսդրության, վարչարարական և մրցակցային խոչընդոտների կրճատման կոնկրետ քայլեր նախատեսված չեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտությունում իրականացված համադրությունների և վերլուծությունների արդյունքներով՝ ՀՀ կառավարության կողմից իրականացվող ՓՄՁ-ների զարգացման ուղղությամբ վարվող քաղաքականության վերաբերյալ կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

- ՓՄՁ-ների գործունեության խոչընդոտները գույքագրված չեն և իրականացվող բարեփոխումները հիմնված չեն փաստերի վերլուծության վրա:
- Պետություն-մասնավոր հատված երկխոսության ինստիտուցիոնալ մեխանիզմները չեն գործում: Բիզնեսի կարծիքը լսելի է դառնում միայն բողոքի ալիք բարձրացնելիս, որոշումների կայացման վերջնական փուլում:
- ՓՄՁ-ների շահերը ներկայացնող հասարակական կառույցների հետ ակտիվ երկխոսություն առկա չէ, խոստացված տարածքային ձեռներեցության կենտրոններն առայժմ չեն ստեղծվել:
- Կառավարությունը չունի տնտեսական զարգացման միասնական փաստաթուղթ, որն անորոշություններ է ստեղծում նաև ՓՄՁ-ների համար միջավայրի ձևավորման հարցում:
- Քաղաքականություն մշակող մարմինների միջև սերտ համագործակցություն չկա. յուրաքանչյուրը գործում է իր պատկերացումներին համապատասխան, ինչը մշակվող փաստաթղթերի տարբեր տեսլականների պատճառով բիզնեսի վարման ապագա պայմանները դարձնում է անորոշ:
- Իրագործված խոստումներից հիմնականը մինչև 24 մլն դրամ շրջանառություն ունեցող բիզնեսի հարկազատումն է: Այն դրական փոփոխություն է, սակայն չի ուղեկցվում համալիր մոտեցմամբ, և իրականացվող այլ օրենսդրական փոփոխությունները կարող են նսեմացնել այդ հարկման ռեժիմի առավելությունները:
- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված հարկային համակարգի փոփոխությունների վերաբերյալ փաստաթուղթը նախատեսում է ՓՄՁ-ների գործունեության պայմանների վատթարացում, ինչը չի նպաստելու փոքր բիզնեսի ընդլայնմանը:
- ՓՄՁ-ների զարգացման միջոցառումների փաթեթը՝ ռազմավարության նախագծի տեսքով, դեռևս հանրային քննարկման փուլում է: Այն ենթադրում է ՓՄՁ-ների աջակցության բազմաթիվ նոր գործիքների կիրառում, սակայն կրկին չի հստակեցնում ՓՄՁ-ների մասով հարկային քաղաքականության ուղղությունները:

- ՓՄՁ-ների աջակցության հիմնական կառույցը անվանափոխվել է, սակայն դրա ապագա գործառույթները հանրության համար մնում են անորոշ:
- ՓՄՁ-ների կարողությունների զարգացման ուղղությամբ պետության ֆինանսավորմամբ նոր միջոցառումներ չեն իրականացվել: Ընդհակառակը՝ կրճատվել է Ներդրումների ազգային կենտրոնի մարզային աշխատողների թիվը՝ յուրաքանչյուր մարզում դառնալով 1 հոգի:
- ՓՄՁ-ների ֆինանսների հասանելիության ուղղությամբ որևէ էական քայլ չի իրականացվել:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. ՓՄՁ ՁԱԿ-ի 2017, 2018 և 2019թթ. միջոցառումների ծրագրերով նախատեսված գործողությունների համեմատական աղյուսակ

	2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
1	ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2017 թվականին կիրականացվեն աշխատանքներ ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների՝ Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի աշխատողների մասնագիտական հմտությունների զարգացման և որակավորման բարձրացման, ինչպես նաև աջակցության ծրագրերում գործընկեր կազմակերպությունների ներգրավման համար:	ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2018 թվականին կիրականացվեն աշխատանքներ ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների՝ Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի աշխատողների մասնագիտական հմտությունների զարգացման և որակավորման բարձրացման, ինչպես նաև աջակցության ծրագրերում գործընկեր կազմակերպությունների ներգրավման համար:	Միջոցառումներ նախատեսված չեն
2	ՓՄՁ սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում) <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2017 թվականին ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում գործարար ուսուցողական դասընթացներին կմասնակցեն առնվազն 350 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներ:	ՓՄՁ սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում) <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2018 թվականին ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում գործարար ուսուցողական դասընթացներին կմասնակցեն 300-400 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներ:	ՓՄՁ սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում) <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2019 թվականին ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում գործարար ուսուցողական դասընթացներին կմասնակցեն 150-200 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներ:

3	ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2017 թվականին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության շրջանակներում աջակցություն կցուցաբերվի 3500-4000 ՓՄՁ սուբյեկտի՝ ապահովելով առնվազն 8000 անգամ աջակցություն:	ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2018 թվականին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության շրջանակներում աջակցություն կցուցաբերվի 3500-4000 ՓՄՁ սուբյեկտի՝ ապահովելով առնվազն 8000 անգամ աջակցություն:	ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2019 թվականին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության շրջանակներում սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտի կտրամադրվի 7000-8000 բանավոր խորհրդատվություն:
4	ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2017 թվականին գործող ՓՄՁ սուբյեկտներին և սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրման) և գործարար նախաձեռնություններին աջակցության շրջանակներում ֆինանսական աջակցություն կցուցաբերվի 15-20 գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտի:	ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2018 թվականին գործող ՓՄՁ սուբյեկտներին և սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրման) և գործարար նախաձեռնություններին աջակցության շրջանակներում ֆինանսական աջակցություն կցուցաբերվի 20-30 գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտի:	ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2019 թվականին գործող ՓՄՁ սուբյեկտներին և սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրման) և գործարար նախաձեռնություններին աջակցության շրջանակներում ֆինանսական աջակցություն կցուցաբերվի 25-30 գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտի:
5	Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային աջակցություն <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2017 թվականին, 2013-2016թթ. ընթացքում կատարած մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման (PACA) արդյունքում բացահայտված տնտեսական նախաձեռնություններից կիրականացվեն՝	Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային աջակցություն <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2018 թվականին, 2013-2017թթ. ընթացքում կատարած մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման (PACA) արդյունքում բացահայտված տնտեսական նախաձեռնություններից կիրականացվեն՝	Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային աջակցություն <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2019 թվականի ընթացքում կիրականացվեն՝ • Տարածաշրջանային և համայնքային տնտեսական զարգացման ծրագրեր, • Օրինակելի գործարար մոդելների ստեղծում և ներդրում

	1) 10-15 ենթակառուցվածքային ծրագրեր. 2) Կմշակվի - 1 օրինակելի գործարար մոդել և 1 գործարար ուղեցույց. 3) Գերակա ոլորտներում գործող 10-15 սկսնակ գործարարների կորամադրվեն դրամաշնորհներ. 4) Տեխնոլոգիական դասընթացներ/խորհրդատվություն կկազմակերպվի շուրջ 40 սկսնակ գործարարների համար (ներառված է ՓՄՁ սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն բաժնի ցուցանիշների մեջ). 5) Կթարմացվի տնտեսական քարտեզագրում իրականացրած համայնքների կայքը (ecomap.smednc.am)	1) 4 ենթակառուցվածքային ծրագրեր. 2) Գերակա ոլորտներում գործող 16 սկսնակ գործարարների կորամադրվեն դրամաշնորհներ. 3) Տեխնոլոգիական դասընթացներ/խորհրդատվություն կկազմակերպվի շուրջ 40-50 սկսնակ գործարարների համար (ներառված է ՓՄՁ սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն բաժնի ցուցանիշների մեջ).	• Տեխնոլոգիական ձեռնարկ-ուղեցույցների հրատարակում • Տեխնոլոգիական դրամաշնորհների տրամադրում Այդ թվում առաջին եռամսյակի ընթացքում՝ • Մրցունակ արտադրության խթանում, տեղական ապրանքանիշերի ձևավորում և հետագա առաջնորդում՝ աջակցություն ցուցաբերելով տեղական ռեսուրսների վրա հիմնված ապրանքների և ծառայությունների զարգացմանը • 1 տեխնոլոգիական ձեռնարկ-ուղեցույցի հրատարակում • 5 տեխնոլոգիական դրամաշնորհի տրամադրում
6	Կանանց ձեռներեցությանն աջակցություն <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2017 թվականին կին գործարարների համար կկազմակերպվեն տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական բնույթի միջոցառումների կանանց ձեռներեցության զարգացման ծրագրեր իրականացնող տեղական և միջազգային կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխություն:	Կանանց ձեռներեցությանն աջակցություն <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2018 թվականին կին գործարարների համար կկազմակերպվեն տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական բնույթի միջոցառումների կանանց ձեռներեցության զարգացման ծրագրեր իրականացնող տեղական և միջազգային կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխություն:	Միջոցառումներ նախատեսված չեն
7	Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում	Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում	Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում

	<u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2017 թվականին Հայաստանում ՁԵՑ-ի գործարար համագործակցության կենտրոնի գործունեության ապահովման շրջանակներում ՁԵՑ-ի գործարար համագործակցության հիմնապաշարը կհամալրվի միջազգային համագործակցության ներուժ ունեցող հայ գործարարների կողմից ներկայացվող 30-40 նոր գործարար համագործակցության վերաբերյալ առաջարկներով, ինչպես նաև գործունեության միջազգայնացման նպատակով աջակցություն կցուցաբերվի առնվազն 120-150 հայ գործարարների:	<u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2018 թվականին Հայաստանում ՁԵՑ-ի գործարար համագործակցության կենտրոնի գործունեության ապահովման շրջանակներում ՁԵՑ-ի գործարար համագործակցության հիմնապաշարը կհամալրվի միջազգային համագործակցության ներուժ ունեցող հայ գործարարների կողմից ներկայացվող 30 նոր գործարար համագործակցության վերաբերյալ առաջարկներով, ինչպես նաև գործունեության միջազգայնացման նպատակով աջակցություն կցուցաբերվի առնվազն 120-150 հայ գործարարների:	<u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2019 թվականին համագործակցելով տեղական և միջազգային կազմակերպությունների հետ՝ կտեղայնացվի տվյալ ուղղությամբ գոյություն ունեցող լավագույն միջազգային փորձը: Արդյունավետ գործիքներ կկիրառվեն արտահանող կամ արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտներին համակողմանի տեխնիկական, տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով:
8	<u>Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ զարգացման (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում</u> <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2017 թվականին ծրագրային միջոցառումների (ուղղությունների) իրականացման արդյունավետության բարձրացման ու ընդլայնման և այդ համապետքստում լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով՝ ինչպես ընթացքի մեջ գտնվող ծրագրերի շրջանակներում, այնպես էլ նոր ծրագրերի մշակման ու իրականացման, նաև միջազգային լավագույն փորձի փոխանցման նպատակով աշխատանքներ կիրականացվեն Հայաստանում ՓՄՁ զարգացմանն ուղղված համապատասխան ծրագրեր իրականացնող միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության ընդլայնման, ինչպես նաև	<u>Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ զարգացման (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում</u> <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2018 թվականին ծրագրային միջոցառումների (ուղղությունների) իրականացման արդյունավետության բարձրացման ու ընդլայնման և այդ համապետքստում լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով՝ ինչպես ընթացքի մեջ գտնվող ծրագրերի շրջանակներում, այնպես էլ նոր ծրագրերի մշակման ու իրականացման, նաև միջազգային լավագույն փորձի փոխանցման նպատակով աշխատանքներ կիրականացվեն Հայաստանում ՓՄՁ զարգացմանն ուղղված համապատասխան ծրագրեր իրականացնող միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության ընդլայնման, ինչպես նաև	<u>Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ զարգացման (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում</u> <u>Ակնկալվող արդյունքը՝</u> 2019 թվականի ընթացքում աշխատանքներ կիրականացվեն Հայաստանում ՓՄՁ զարգացմանն ուղղված համապատասխան ծրագրեր իրականացնող միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության ընդլայնման, ինչպես նաև նոր ծրագրային առաջարկների մշակման և իրականացման ուղղությամբ:

	նոր ծրագրային առաջարկների մշակման և իրականացման ուղղությամբ:	նոր ծրագրային առաջարկների մշակման և իրականացման ուղղությամբ:	
--	---	---	--

Հավելված 2. ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալի 01.11.2019թ. թիվ 07/10693-2019 գրություն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 07/10693-2019

«___» _____ 2019թ.

Ձեր № ԱԿ-046/Ն
09.10.2019թ.

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Կարապետյան,

Ի պատասխան Ձեր գրության, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ներկայացնում է ներքոհիշյալ տեղեկատվությունը.

2018-2019 թվականներին Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի (ներկայիս «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ) մարզային մասնաճյուղերի կողմից մաքուր ծառայություններ (միջոցառումներ)

1) ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)

Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն և ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն/ թեմատիկ և ոլորտային դասընթացներ

2) ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

Իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների հաշվետվությունների ներկայացման և այլ ուղղություններով աջակցություն:

3) Սկսնակ գործարարների և ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն

4) Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսներին աջակցություն

5) Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում

Ինչ վերաբերում է հիմնադրամի կողմից իրականացվող միջոցառումների կատարմանը, այդ թվում նաև ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-L որոշման Հավելվածի N 1-ի 239-րդ կետով նախատեսված, ապա հայտնում ենք որ նշվածի

վերաբերյալ առավել մանրամասն կարող եք ծանոթանալ հիմնադրամի պաշտոնական կայքի՝ «Կորպորատիվ կառավարում» բաժնի «Հաշվետվություն» ենթաբաժնում՝ հետևյալ հղումով <https://www.smednc.am/hy/files:>

2018 և 2019 թվականներին Հայաստանի ՓՄՁ ՀԱԿ հիմնադրամի մարզային մասնաճյուղերում աշխատողների թվաքանակ

2018 թվականին Հայաստանի ՓՄՁ ՀԱԿ հիմնադրամի մարզային մասնաճյուղերում աշխատողների թվաքանակը կազմել է 22, իսկ 2019 թվականին՝ 10 աշխատող:

2018 և 2019 թվականներին ՓՄՁ ՀԱԿ-ի մարզային մասնաճյուղերի ֆինանսավորման փոփոխություններ

Նշված ժամանակահատվածում հիմնադրամի (այդ թվում նաև մարզային կառույցների) պետական աջակցության ծրագրերի ֆինանսավորումը փոփոխության չի ենթարկվել:

Միաժամանակ ներկայացնում ենք նաև ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների» 240-245 և 250-րդ կետերի կատարման ընթացքի վերաբերյալ Ձեր կողմից տեղեկատվությունը

		240 ¹	240 ² կետ
240 կետ	ՓՄՁ ոլորտում խոչընդոտների վերացում՝ ձեռնարկատիրական մշակույթի զարգացման, նպաստավոր օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի կայացման, ՓՄՁ կարողությունների զարգացման ճանապարհով ՓՄՁ խոշորացման խթանների համակարգի զարգացում	Մշակվել և ներկայումս սահմանված կարգով շրջանառվում է «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը աշխատանքային կարգով քննարկվել է մի շարք գերատեսչությունների և միջազգային և ՓՄՁ շահերը ներկայացնող ՀԿ-երի, ՓՄՁ աջակցության ծրագրեր իրականացնող մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ՝ բոլոր շահառուների կարիքների արտացոլման և տարբեր ծրագրերի միջև սիներգիայի ապահովման համար: Նախագիծը հանրային քննարկման նպատակով 08/10/2019-23/10/2019 ժամկետներում տեղադրվել է նաև իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքում հետևյալ հղմամբ՝ https://www.e-draft.am/projects/1986/about :	Միջոցառումը գտնվում է կատարման փուլում: Հարցի շուրջ քննարկումներ են իրականացվել, այդ թվում նաև ՓՄՁ զարգացման խորհրդի ենթախորհրդի նիստին, ՓՄՁ զարգացման խորհրդի և ենթախորհրդի ձևաչափի և կազմի փոփոխության վերաբերյալ՝ խորհուրդը և ենթախորհուրդը ՓՄՁ և խոշոր կազմակերպությունների համագործակցության հնարավորությունների բացահայտման և դրանց խորացման համար որպես հարթակ ձևավորվելու համար:

241	Մասնավոր հատվածում Արտադրողականության բարձրացմանն ուղղված ծրագրային նախաձեռնություններ ի խրախուսում	241.1		Ներկայումս վերջնականացման փուլում է գտնվում թեթև արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին բարձրորակ կադրեր և տեխնոլոգիաներ ապահովող ծառայությունների կենտրոնի գործարկման աշխատանքները
242	Տեխնոլոգիական վերգինմանն ուղղված մասնավոր հատվածի ծրագրերը խթանող գործիքակազմի կիրառում	242.1		Մշակվել և սահմանված կարգով շրջանառվում է «Արդյունաբերության զարգացման հնգամյա ռազմավարությանը» հաստատելու մասին ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որի նպատակն է խթանել առավել բարձր ավելացված արժեք ստեղծող արտադրանք (գիտատար, նորարարական), ինչպես նաև արտահանման տեսանկյունից առավել հեշտ լոգիստիկա ունեցող ճյուղերի զարգացմանը: Միաժամանակ նշված նախագիծը հանրային քննարկման նպատակով 17.10.2019-2021.11.2019 ժամկետներում տեղադրվել է նաև իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքում հետևյալ հղմամբ՝ https://www.e-draft.am/projects/2006/about :
243	Մասնավոր հատվածում կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառության խրախուսում և այդ ուղղությամբ իրականացվող ծրագրերի առաջխաղացմանն աջակցություն	243.1	243.2	Մշակվել և սահմանված կարգով շրջանառվում է «ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1769-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը հանրային քննարկման նպատակով տեղադրվել է նաև իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ e-draft.am համակարգում հետևյալ հղումով https://www.e-draft.am/projects/2015 : Նախագծով առաջարկվում է փոփոխել կորպորատիվ կառավարման կանոնագիրքը ամբողջությամբ, ինչպես նաև սահմանել կորպորատիվ կառավարման գնահատման թերթիկը, կորպորատիվ կառավարման ուղեցույցը և գնահատման չափորոշիչները՝ թափանցիկության, վստահության, բարեվարքության և հաշվետվողականության միջավայրի ձևավորման միջոցով տնտեսություն երկարաժամկետ ներդրումների ներգրավմանը աջակցելու, գործարար հատվածի Քանի որ տվյալ կետի կատարումը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների» 243.1 կետից, նշվածով պայմանավորված այն կիրականացվի «ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1769-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումից հետո:

		կայունությունը ապահովելու, տնտեսական աճը խթանելու, ինչպես նաև տնտեսական որոշումների կայացման գործընթացում հանրության ներգրավվածությունը ապահովելու նպատակով:	
244	Կարգավորիչ արդյունավետ մեխանիզմների գործարկման միջոցով տնտեսական մրցակցության պաշտպանության ապահովում	244.1 կետ Միջոցառումը գտնվում է կատարման փուլում: Վերջինիս ամբողջական և ընդգրկուն կատարման նպատակով իրականացվել է ՀՀ-ում առկա լիցենզիաների և թույլտվությունների գույքագրում, ինչպես նաև կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն: Նախատեսվում է իրականացնել վերջիններիս տրամադրման իրավական հիմքերի վերլուծություն: և սահմանված ժամկետում կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ:	
245	Ապրանքների և ծառայությունների շուկաներում նոր մասնակիցների մուտքի և առաջ-խաղացման խրախուսում՝ այդ թվում, պետության կողմից սահմանված ինստիտուցիոնալ կամ այլ տնտեսական արգելքների կամ սահմանափակումն ² թվաքանակի կրճատման միջոցով	245.1 և 245 ² Միջոցառումները գտնվում են կատարման փուլում: Մասնավորապես, աշխատանքներ են իրականացվում ժամանակակից շուկայական պայմաններին համապատասխան ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի իրականացման իրավական կարգավորման ապահովման, ինչպես նաև երրորդ երկրներից ՀՀ ներմուծման և արտահանման քվոտաների համակարգի ընթացակարգերը սահմանող ՀՀ կառավարության որոշումների նախագծերի մշակման ուղղությամբ:	
250	Արտահանմանն առնչվող մաքսային ընթացակարգերի և դրանցով պայմանավորված վարչարարության պարզեցում	250.1 Վերահսկվող ապրանքներ արտահանող սուբյեկտների համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել նախագիծ, որով առաջարկվում է ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 765-Ն որոշումը մի շարք դրույթներով, որի արդյունքում կպարզեցվի ընթացակարգը: Մասնավորապես՝ արտահանող սուբյեկտը (կամ մաքսային գործակալը) կարող է էլեկտրոնային փոստի միջոցով դիմել փորձագիտական կազմակերպությանը և երկու աշխատանքային ժամվա ընթացքում ստանալ պատասխան՝ արտահանվող ապրանքը հսկվող ապրանքների ցանկում առկա է թե՛ ոչ:	

Հարգանքով՝

 Recoverable Signature

X 

Նաիրա Մարգարյան
Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Signed by: MARGARYAN NAIRA 6707830182

ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կատարող՝

Ձեռնբեցության զարգացման վարչության գլխավոր մասնագետ, Հոփսիմե Հովհաննիսյան
011597136

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: